

ՕԾՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՏՐԱՆ

Այսու հոգեկան ցնծութեամբ կը հաղորդենք եւ մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ Կիրակի, Օգոստոս 29ի երեկոյեան ժամը 6:00-ին, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան իր կողքին ունենալով Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանը, Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Դոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանը, Դալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Դայց. Եկեղեցւոյ Դոգետոր Դովիլ՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քինյ. Մարգարեանը, Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Դայց. Եկեղեցւոյ Դոգետոր Դովիլ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեանը եւ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Դոգետոր Դովիլ՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեանը եւ Եկեղեցւոյ սարկաւագները, «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ մուտք գործեցին Մայր Եկեղեցիէն ներս եւ յառաջացան դէպի Սուրբ Նշան Մատուռ:

Մատրան բարերարները՝ Տէր եւ Տիկին Նշան եւ Ռուպի Էն Տէրտէրեան, որոնք կնքահայրերէն մին եւն նաեւ Մայր Եկեղեցւոյ, յուզումով եւ ուրախութեամբ բացին Մատրան դուռը, ուրկէ ներս մտան հոգեւորականները եւ բարերարները:

Յատուկ արարողութեամբ Առաջնորդ Սրբազան Դայրը օծեց մատրան պատին վրայ գետեղուած խաչքարը, որ ձօնուած էր ի յիշատակ իրենց ծնողներուն՝ Տէր եւ Տիկին Դայրապետ եւ Աննա Տէրտէրեանի եւ Տէր եւ Տիկին Էնթընի եւ Վըրժինիա Ալեքսանդրիի:

Այս առիթով Սրբազան Դայրը իր պատգամին մէջ ըսաւ. *«Սրբոց Դելոնդեանց մեր Մայր Եկեղեցին Աստուծոյ կողմէ յատուկ պարգեւ մըն է մեզի համար: Անցնող քանի մը տարիներու ընթացքին Արեւմտեան Թեմի հաւատացեալները սրտանց աշխատեցան աւարտելու համար Մայր Եկեղեցւոյ կառուցումը: Նուիրեալ հաւատացեալներուն մէջ իւրայատուկ տեղ կը գրաւեն Տէր եւ Տիկին Նշան Տէրտէրեանը: Անոնք ոչ միայն Բարերարներն են Մայր Եկեղեցւոյ եւ Առաջնորդարանին, այլ անցնող յիսուն տարիներու ընթացքին Կնքահայրերը եղած են Թեմիս շատ մը եկեղեցիներուն: Առ ի գնահատութիւն Արեւմտեան Թեմին համար իրենց կատարած բազմաթիւ նուիրատուութիւններուն, Մատուռը Օծուեցաւ Սուրբ Նշան անունով: Այս մատրան մէջ հաւատացեալները պիտի աղօթեն Աստուծոյ՝ իրենց հոգետոր կեանքի վերանորոգութեան համար: Մեծապէս գնահատելի եւ ներշնչում պատճառող պարագան այն է, որ Բարերարները այս մատուռը կը ձօնեն ի յիշատակ իրենց ծնողներուն:*

Սիրելի Տէր եւ Տիկին Նշան եւ Ռուպի Էն Տէրտէրեան, բոլորս ալ կը վայելենք ձեր անձնուէր բարեգործութեան արդիւնքը: Թող Տէրը վարձահատոյց ըլլայ ձեզի եւ միշտ զօրացնէ ձեզ՝ մինչ դուք կը շարունակէք մնալ որպէս օրհնութիւն Դայց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ»:

Արարողութեան ներկայ գտնուողները շնորհաւորեցին յարգարժան բարերարները եւ քաջառողջութեան բարեմաղութիւններ կատարեցին անոնց: